3. Գրեցեք ինքներդ և հաստատեցնը նամակը կոլեկտիվի ընդհանուր հավաքույթում, նամակ գրելուն մասնակից արեգությունը ողակներին:

4. Առաջին նամակի հետ ուղարկեցէք
ձեր կոլեկտիվի պատմությունը:

5. Փոքրիկ զիազրամով կամ նկարի մի-
ջոցով արտասահմանի պիոներներին ցուց
սկեբ ձեր կոլեկտիվի աճումը, ակտիվու-
թյունը և կազմ. կառուցգածքը:

6. Գրեցեք ձեր կոլեկտիվի, ավտալ ժա-
մանակաշրջանի կոնկրետ խնդիրների մա-
սին, ձմեռային, ամսառային աշխատանքների
մասին և այլն:

7. Գրեցեք մահրամասն՝ լազերային
կամպանիայի մասին, ձեր կատարած աշխա-
տանքը հրապարակներում, եքսկուրսիա-
ցում, դյուլում և այլն:

8. Գրեցեք խորհրդային դպրոցի, ման-
կանակի, ֆորայուսի, աշտկերտական ինք-
նավարության, պատի թերթի, գովրոցական
խմբակների, անկազմակերպ յերիխաների
ու պատանիների մեջ կատարած աշխա-
տանքի մասին և այլն:

9. Գրեցեք պիոներների և մեծ բնկեր-
ների փոխարարերությունների մասին:

ա) կոլեկտիվում՝ կոլվարի և կոմիտե-
տականների հետ.

բ) կուս. բջիջի անդամների հետ.

գ) դպրոցում՝ ուսուցիչների հետ.

դ) այլ հիմնարկներում՝ խորհրդային
յերկրի քաղաքացիների հետ և այլն:

10. Գրեցեք մանրամասն հոկտեմբերիկ-
ների խմբակի աշխատանքների մասին,
պատմեցէք, թե ինչպես են նրանք մաս-
նակցում կոլեկտիվի ընդհանուր աշխա-
տանքներին:

11. Կցեցեք նամակին հնարավորության
սահմաններում կոլեկտիվի լավ թերթը,
հուշատետը, նկարներ ձեր կոլեկտիվի
կանքից և այլն:

12. Ոմեն նամակի հետ գրեցէք ձեր
մանրամասն հասցեն:

13. Գրեցեք նամակներ միայն Սպա-
նիայի պիոներներին, վորովհետև այդտեղի
պիոներներն են կցված Հայաստանի պիո-
ներական կազմակերպությանը:

14. Ուղարկեցեք նամակները միմիայն
Պիոներական կենտրոնական Կարբինետի
միջոցով Յերևան, Արովյան փող. № 10.
այստեղից դուք սպանական վորոշ կոլեկ-
տիվի հասցե կստանաք, վորի հետ և կապ
հաստատեք:

15. Հիւեցել, վոր արտասահմանից ստացած նամակը պետք է ոգտագործել. քննեցեք այդ նամակն ընդհանուր հավաքութում, գրեցեք պատի թերթում, պատճենն ուղարկեցեք «Պիոներ» ամսագրի խմբագրությանը. պատմեցեք ստացած նամակի մասին լկօնեՄ բջիջին, ձեր ընտաքին, դպրոցին, անկազմակերպներին և այլն:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԾ Ե ԱՇԽԱՏԻ ՊԻՌՆԵՐԸ

Պիոներն ընտանիքներ

1. Պիոներն որինակ ե բոլորի համար— և դպրոցում, և փողոցում, և ընտանիքում: Պիոներն ընտանիքում կոմիերիտմիության և կուսակցության հեղափոխական ազգեցության հաղորդիչն է:

2. Կոլիկատիվից տուն վերադառնալով, պիոները պետք է հիշի, վոր պարտավոր և պիոներական աշխատանք կատարել: Ընտանիքում հարկավոր ե թեթևացնել մոր աշխատանքը—ջուրը բերել, վառարան վառել, փայտ կոտրել և այլն:

3. Առաջինը լիղիր մաքրություն պահպանելու գործում. ձեռքերդ՝ ուտելուց առաջ՝ լվա. հետեւիր վորպեսզի վոքը յեղբայրներդ ու քույրերդ ևս անեն այդ, պայքարիր փոշու և կեղտոտության դեմ, կարգի բեր ձեր տան շրջապատը:

4. Յեթե ընտանիքում վորնե մեկը հիվանդանում ե, աշխատիր բժիշկ հրավիրել:

5. Ազատիր մորդ՝ փոքրիկ յերեխաներին

հսկելուց. հսկիր ինքդ. յերեխաներին հետդ
ակումբ տար:

6. Հին պատկերները փոխարինիր նո-
րերով, — հեղափոխական նկարներով. աշ-
խատիր տանը պիոներական անկյուն պատ-
րաստել:

7. Նախապատրաստիր ձեր ընտանիքը
հեղափոխական տոններին. նախքան տոննը
մաքրիր հագուստի, զարդարիր սենյակը
կարմիր գույնով, հեղափոխական տոնական
տրամադրություն ստեղծիր ընտանիքում:

8. Հաղորդիր հորդ և մորդ բոլոր նոր
լուրերը, վոր իմացել ես կոլլեկտիվում—
դրքից և թերթից. պնդիր, վոր ծնողներդ
բաժանորդագրվեն թերթերին:

9. Ընտանիքի մեծերին հետդ ակումբ
տար կամ կարմիր անկյուն, զրադարան,
յեթե կան, իսկ անգրագետներին՝ անգրա-
գետության լիկայան:

ՊԻՌՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ամեն մի դպրոցի պիոներ-աշակերտները
կենտրոնանում են ֆորպուտում: Ֆորպուտը
կամ պիոներական կորիզը դպրոցում միաց-

նում և բոլոր պիոներներին և իր պրեզի-
դիումի մեջոցով դպրոցում կատարում ե
պիոներական կազմակերպության կողմից
իրեն առաջարպած խնդիրները:

Սշակերտական ժողովներ հրավիրել,
տոնների կամպանիաներ անցկացնել, խըմ-
բակներ կազմակերպի, պատրաստել զա-
նազան անկյուններ դպրոցի ակումբում,
ոգնել լկՅԵՄ ըջիջին, աշակերտներին մաս-
նակից դարձնել ֆորպուտի աշխատանքնե-
րին, ահա ֆորպուտի անելիքները դպրո-
ցում:

Բացի այս բոլորից, յուրաքանչյուր պիո-
ներ ունի իր առանձին պարտականություն-
ները, ինչպես որինակ՝ ամեն մի պիոներից
որինակելի աշակերտ պետք է լինի, դասե-
րը ճիշտ և ժամանակին պիտի պատրաս-
տի, կարգապահության հետեւ, ոգնի ու-
սուցչին իր աշխատանքներում, դպրոցա-
կան պիտույքները, նստարաններ, գրա-
տախտակը խնամքով պահպանի և ալյն,
անհատորեն բացատրի աշակերտներին պիո-
ներական կազմակերպության նպատակ-
ները, նրանց ծանոթացնի ողակի և կոլ-
եկտիվի աշխատանքներին և ալյն:

Պիոները պետք ե կատարի լենինի
պատգամը՝ սովորիր, սովորիր, սովորիր:

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Վորպեսզի մեր սոցիալիստական շինա-
րարությունն արագ թափով առաջ ընթա-
նա, անհրաժեշտ և ուժեղացնել գյուղի և
քաղաքի կապը: Այդ տեսակիտից, պիոներ-
ների անելիքն և ուժեղացնել բանվորների
և գյուղացիների մերձեցումը:

Քաղաքի պիոներական կոլեկտիվները
պետք ե ոգնեն գյուղի կոլեկտիվներին,
նրանց գրքեր, թերթեր ուղարկելով: Հար-
կավոր ե գրավոր կապ ստեղծել գյուղի կոլ-
լեկտիվի հետ, նրանց գրենական պիտույք-
ներ ուղարկել:

Ամառն էքսկուրսիա կազմակերպել, միա-
ցլալ հավաքութներ կազմակերպել, կարգի
բերել գյուղի խրճիթ-ընթերցարանը, ոգնել
գյուղացիներին գաշտացն աշխատանքնե-
րում:

Քրագետ պիոները պետք ե բարձրա-
ձան ընթերցանություն կազմակերպի, բա-

ցատրի գյուղացիներին խորհրդային իշխա-
նության որենքները, մեր կազմակերպու-
թյան նպատակները և այլն:

Գյուղի պիոներներն եւ իրենց հերթին
կապ պետք ե ստեղծեն քաղաքի պիոներ-
ների հետ: Պետք ե ոգնեն գյուղի կոմի-
տամիության և կուսակցության բջիջնե-
րին, մեծ ընկերների հետ պայքարեն կու-
տակների գեմ, սակայն այդ կոփվը հալհոյե-
լով ու ծաղրելով չպետք ե լինի:

Գյուղացիներին պետք ե բացատրել ըլ-
նության յերեսութները (անձրել, ձյունը,
կարկուտը և այլն): Պիոներները գյուղում
ակտիվ մասնակցություն պետք ե ցուցա-
րերեն գյուղի գպրոցի շինարարության աս-
պարիզում:

Գյուղի գպրոցում պիոներն ամհնատակ-
տիվ աշակերտը և ուսուցչի առաջին ոգնա-
կանն ե:

ՊԻՈՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ ԱՒ ԱՆԱ- ՊԱՍՏԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

1. Պիոներն որինակ ե բոլոր յերեխա-
ներին. պիոները զրավում ե բոլոր յերե-

խաներին իր խաղին, աշխատանքին, կուլ-
լէկտիվի հավաքույթին:

2. Մի մոռանա անկազմակերպ յերե-
խաներին. նրանք գեռս այնպես զիտակից
չեն, ինչպես դու չես, մի ոտարացնի նը-
րանց. շուտ շուտ հավաքիր անկազմակերպ
յերեխաներին:

3. Անկազմակերպ յերեխաների հետ խա-
ղա ու այն խաղերը, վոր սովորել ես կու-
լէկտիվում, պիոներական յերգեր, սովորեց-
րու նրանց. աշխատիր վայելել նրանց
վստահությունը:

4. Պատմիր նրանց ձեր կոլեկտիվի մա-
սին. բացատրիր պիոներների որենքները և
սովորությունները. աշխատիր ներգրավել
նրանց պիոներական աշխատանքների մեջ:

5. Մասնակից դարձրու նրանց անցկաց-
վող կամանիաներին և տոներին:

6. Պիոներն անապաստաններին մաս-
նակից և անում արհեստանոցների աշխա-
տանքներին:

7. Պիոներներն ուսումնասիրում են անա-
պաստանների կյանքը և կենցաղը. պիո-
ներների նյութական ոգնությունն այն ե,

վոր մասնակցում են «ոգնության կամպա-
նիաներին», վճարովի ներկայացում են
կազմակերպում անապաստանների ոգտին,
ագիտացիա յեն անում հասակավորների
մեջ՝ «Անապաստան Յերեխաների Բարե-
կամների» բնիջում ընդունվելու համար:

Անապաստանների մեջ աշխատելու հա-
մար, կոլլեկտիվները կապ են հաստատում
այնպիսի վայրերի հետ, վորտեղ կենտրո-
նացած են անապաստան յերեխաները, ո-
րինակ՝ ճաշարանները, գիշերոթիկ հիմ-
նարկները և այլն,

Անապաստանների մեջ աշխատելը պիո-
ներների գլխավոր աշխատանքներից մեկն
եւ այդ կլինի լենինի պատգամներից մե-
կի իրագործումը:

Այդ աշխատանքների վերջնական նպա-
տակն եւ անապաստաններին պիոներական
կոլլեկտիվի մեջ զրավել:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԼՐԱԳԻՐ ԿԱՐԴԱԼ

1. Քո պատրաստականության համա-
պատասխան թերթ ընտրիր.

2. Հեղտ, քեզ հասկանալի թերթից հետըգնետե «Խորհրդավին Հայաստան»-ին անցիր.

«Ավանդարդ»,

«Պիոներ» ամսագիր,

„Պionerск. Правда“,

«Մաճկալ»,

«Խորհրդ. Հայաստան»

3. Թերթն ամեն որ կարդա.

4. Կարդալուց առաջ ծանոթացիր թերթին, կարդա հոդվածների վերնագրերը:

5. Քեզ ամենից ավելի հետաքրքրող և անհրաժեշտ նյութերից սկսիր կարդալ—

Պիոներական բաժին

Կոմիտեի տմիության կյանքը,

Միջազգային դրություն,

Խորհրդավին Միություն:

6. Անպայման կարդա հեռագրերը և խորհրդի շնորհը շուրջը յեղած հոդվածները:

7. Մշտական հետերի թե ԽՍՀՄ և թե արտասահմանան պիոներական կազմակեր-

պության շուրջը յեղած հոդվածներին:

8. Կարդալու ժամանակ աշխատիր ոգտըգել թե քարտեզով, թե բառարանով:

9. Թերթը կարդա ձեր ընտանիքում, ընկերներիդ հետ՝ դպրոցում:

ԿԱՐԴԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Շատ պիոներներ, աշակերտներ կան, զորոնք բավարար չափով չեն հասկացել դեռ զիրք կարդալու ոգուան ու կարեռությունը: Ամեն մի պիոների պարտականությունը պետք է լինի ապացուցել աշակերտներին և իր մյուս ընկերներին, վոր զիրքը մարդու ամենալավ ընկերն է: Այն զիտությունը, վոր նա ստանում է զրքից, կյանքում և աշխատանքներում ոգնում և նրան:

ԿԱՐԴԱԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Շատ ու շատ գրքեր կան, բոլորը չեն կարող կարդալ ընտրիր յեղած գրքերից լավերը. այդ մասին խորհուրդներ հարցըրու կոլվարից, ուսուցչից:

2. Հետևիր կարդացածիդ վոչ թե քանակին, այլ վորակին։ Մտածված, ուշագիր կարդացած մեկ գիրքը—արագ, շտապ կարդացած 100 գիրք արժի։

3. Մի կարդա այնքան, վոր ուղեղդ հոգնի. հոգնածությունն ազգում ե քո առողջության վրա և պակասեցնում կարդացածի ոգտագետությունը։

4. Աշխատիր բարձրածայն ու գանդաղ կարդալ։

5. Կարդալու ժամանակ քեզ մոտ մատիտ և թուղթ ունեցիր։ Քեզ հետաքրքրող կարեոր մտքերն արտագրիր։

6. Յերբ դժվար ես կենտրոնանում՝ մի կարդա։

7. Աղմուկի և խոսակցության մեջ մի կարդա։

8. Որական թեկուղ մեկ ժամ, բայց ամեն որ կարդա։

9. Միաժամանակ մի քանի գիրք մի կարդա։

10. Թերթեր ու հանդեսներ ել կարդա։ Գիտակից պիոնները տեղյակ պետք ե լինի ընթացիկ կյանքին։

11. Պառկած չկարդաս, այդպիս կարդալը վնասում ե քո աչքերին, տեսողությանը։

12. Կարդալու ժամանակ այնպես արա, վոր լուսը ձախ կողմից ընկնի։

13. Անբավարար լուսի տակ չկարդաս։

14. Զկարդաս յերբ աչքերդ հոգնած են։

15. Ուտելուց անմիջապես հետո մի կարդա։

ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ժողովը կարելի յե գումարել այն ժամանակ, յերբ ներկա յե գտնվում ժողովականների կեսից վոչ պակաս մասը։ Յեթե ժողովի համար յեկողների թիվը նորմազից պակաս ե, ժողովը հետաձգվում ե մի ուրիշ որ և այս գեալքում արգեն ժողովն որինական ե համարվում՝ անկախ ներկա յեղողների թվից։ Ժողովը բաց ե անում նա, ով հրավիրել ե և առաջարկում ե նախագահ ու քարտուղար ընտրել։

ԺՈՂՈՎԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Նախագահ ընտրվելուց հետո, ընդուն-

վում ե որակարգը, այսինքն՝ մի շարք հարցեր, վորոնք պետք ե քննության առնվեն: Սկզբում դրվուա են զլխավոր հարցերը, իսկ համեմատաբար յերկրորդական, փոքր հարցերը՝ վերջը: Որակարգի ամեն մի հարցի մասին հանդես ե տալիս մի ընկեր և հարկ յեղած բացատրությունը տալիս ե (գեկուցում) վորից հետո բացվում ե վիճաբանություն (ըստ ելության խոսել) այդ հարցի շուրջը: Խոսել ցանկացողները թուլավություն են խնդրում նախագահից: Նախագահը հերթով նրանց ցուցակագրում ե և կարգով ձայն ե տալիս խոսելու. յերբ բոլորը խոսում են, նախագահը ձայն ե տալիս առաջի խոսողին (գեկուցողին) իր վերջին խոսքն ասելու համար: Դրանից հետո այդ հարցի շուրջն առաջարկներ են լինում: Բոլոր առաջարկները նախագահը քվեարկում ե՝ «ով համաձայն ե այս առաջարկին, թող ձեռքը բարձրացնի», «ով դեմ ե, ձեռքը բարձրացնի»: Քարտուղարն արձանագրում ե դիցուք, 27—թեր (կողմանակից) 9—դեմ. յեթե ժողովն ընտրություններ պետք ե կատարի, նախագահն ասում ե՝ «թեկնա-

ծուներ առաջարկեցեք». բոլոր անունները գրում ե և հետո հերթով քվեարկում: Այն ընկերները, վորոնք շատ ձայն են ստանում, նրանք են ընտրվում: Յերբ վոր որակարգի բոլոր հարցերի շուրջը վորոշումներ են ընդունվում և այլև հարցեր չկան, նախագահը հայտաբարում ե՝ «ժողովը հայտաբարում եմ փակված», վորից հետո բոլորը ցըվում են:

ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագահը ղեկավարում ե ժողովի աշխատանքները, նա հետևում է ժողովի ընդհանուր կարգին, հերթով ձայն ե տալիս ցուցակում զրվածներին: Զի թույլ տալիս ազմել և խանգարել ժողովը. կարգը խանգարողներին խնդրում ե, վոր լուս մնան, հակառակ ղեպքում՝ դուրս գալ ժողովից: Նախագահն իրավունք ունի զգուշացնել այն ընկերներին, վորոնք շեղվում են հարցից ու չեն խոսում բուն խնդրի շուրջը:

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆԱԼԻՔ ԱԼԻՆԵԲԲ
Քարտուղարը լսում է և և ո Արձանագրու-
թյուն կազմում:

Արձանագրությունը գրվում է այսպես՝
Արձանագրություն Ա
. ժիկ ժողովի
մասնակցում ամիս տարի
բացակա և ելին
. . . . 1.
2.
3.

Եախագահ
Քարտուղար

Լ Ա Կ Ե Խ Ա Խ Ա Խ Ա Խ

Վ Ա Ր Ո Ղ Ե Գ Ի Խ Ա Խ Ա Խ Ա Խ

1.

2.

3.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՑ-
ՎՈՂԻՆ

- Յերբեք մի խոսիր այն բանի մասին,
ինչ վոր ինքդ չես հասկանում:
- Աւրիշի ասածը մի կրկնիր:
- Կարճ խոսիր, և «ջուր սի ծնծիր»:
- Մի խանգարիր ընկերոջդ, յերբ նա
արտահայտվում է:

5. Դանդաղ խոսիր և բառերն արտա-
սանիր պարզ: Հիշիր, վոր դու խամ հսամ-
բողջ ժողովի համար:

6. Ժողովում քեզ հետաքրքրող հարցերը
գրիր, այդ քեզ պետք կզա:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՔՍԿՈՒՐՄԻԱ. ՅԵՎ ԶԲՈ-
ՍԱՆՔ ԳՆԱՅՈՂՆԵՐԻՆ

- Վերցրու քեզ հետ միայն անհրաժեշտ
երեր: Ավելորդ իրերով մի ծանրաբեռնիր
քեզ:

2. Մի մոռանա վերցնել այն բոլոր ի-
րերը, վոր պատվիրել և քո զեկավարը:

3. Խոնավ հագուստում մի միա:

4. Եքսկուրսիայի կամ զբոսանքի ժա-
մանակ շատ ջուր մի խմիր:


5. Եքսկուրսիայի կամ զբոսանքի ժա-
մանակ հարկավոր չի շուտ շուտ հանգստա-
նալ: Այդ ավելի հոգնեցնում է:

6. Հանգստանալու ժամանակ պետք է
նստես այնպես, վոր վոտքերդ բարձր լի-
նեն (ծառին, քարին, գարպասին հենած):
7. Ճանապարհին ուշադրությամբ գնա:
8. Մեկ ժամում պետք է գնալ 4 վերս-
տից վոչ ավել:

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՎԵՐՑՆԻ ԱՄԵՆ ՄԻ ՊԻՌՆԵՐ
ԼԱԳԵՐ ԳՆԱԼԻՍ**


1. Սպիտակեղեն—2 զուգ:
2. Յերեսորբիչ—2 հատ:
3. Փոքրիկ բարձ—1 հատ:
4. Սավան—1 հատ:
5. Վերմակ (աղյալ)—1 հատ:
6. Վերնազգեստ—2 հատ:
7. Վերարկու—1 հատ:
8. Վոտնամաններ և նասկիններ:
9. Թաշկինակ—2 հատ:
10. Ջրաման և ափսե:
11. Գդալ, պատառաքաղ և դանակ:
12. Սալոն ձեռքի, լվացքի:
13. Առամի փոշի և խոզանակ:
14. Սանր (աղջիկներին):
15. Ասեղ և թել:
16. Մատրաս (մեշոկ):
17. Ծոցի տետր:
18. Մատիտ:
19. Ճամբորդական պայուսակ:

ԻՆՉՊԵՏՔ ՊԵՏՔ Ե ՎՐԱՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ
Վրան խփելու տեղը մաքրելուց հետո
պետք ե պատրաստեք վրանի փայտերը: Փայ-
տերը հետևյալ կերպ պետք ե պատրաստել՝
պետք ե վերցնել յերկու փայտ և ծալը բերը



Կապել միմյանց. ալդպիսի փալտեր պետք ե
պատրաստել յերկու զուգ, հետո այդ փայ-
տերի ծալը բերերը խորում եք գետնինեց և դրանց
վրա մեկ յերկար փայտ գնում ալս ձևով:

Հետո չորս աղյալ կամ առանձին պատրաստված շորեր միմյանց կարելով՝ զցում եք վրանի փայտերի վրա, այնպես, ինչպես նկարն է ցուց տալիս: Աղյալի վերին մասը՝ կարված թոկերի շարունակությունը, դուք ամրացնում եք գետնին խփած ցիցերին. թոկերը պինդ են քաշվում, վորպեսզի վրանը չկախվի, այլ ուղիղ և պինդ մաս: Ցցերը պետք է թեք խփել, վորպեսզի չպոկվին, ահա այս ձևով—



Վրանը պատրաստելուց հետո, դուք փորում եք վրանի չորս կողմը, վորպեսզի պաշտպանված լինեք անձրենից և այդ փորած հողը լցնում եք փեշերի տակը:

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՄՇԱԿԵԼ ՀՈՂԸ

Հողը մշակելու համար ամենից առաջ պետք է ձեռք ըերել բահ, փոցիս, ցնցուղ, փոքր գոգավոր թիակ:

Յերկրորդ աշխատանքը պետք է լինի հողը քարերից մաքրել, պարարտացնել և փափկացնել. պարարտացնելու համար ամենից լավ է գործածել տավաշի աղը. հարկավոր է աղը հավասար կերպով շաղ տալ հողի յերեսը: Յեթև հողամասը մեծ և և շատ պինդ, ցանկալի յի վարել, իսկ յեթե փոքր և և փափուկ, պետք է բահով քանդել: Հողը փափկացնելու համար հետեւյալ ձեռվ պետք է փորել—բահը մինչև բուկը պետք է խրել հողի մեջ, հանել մի կտոր, հողը և շըշել այնպես, վոր լորեսի մասն ընկնի տակը, իսկ տակի մասը՝ հողի յերեսը: Երջած հողը բահի սուր կողքերով պետք է կտրատել փշերել: Հողն աղբելուց և քանդելուց հետո պետք է փոցիս հավասարեց-

նել և հավաքել կոշտերն ու բույսերի արմատները:


ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԶՐԵԼ ԲԱՆՉԱՐԱՆՈՅԸ

Ցանած մարգերը, մինչև ծեկը և առաջին տերեների յերեալը, պետք եւ խոնավ պահել: Յեթի հնարավոր չե ջրել կարելի յե մարգերի յերեսը խսիրով կամ չոր տերեներով ծածկել, վոր ծեկուց հետո պետք ե զգուշութիւնը վերցնել: Արև ժամանակ ընդհանրապես չեն ջրում, վորովհետև ջրի մի մասն առանց ոգուտ տալու գոլորշիանում ե, պետք ե ջրել յերեկոյան, արել մայր մատնելուց հետո: Այդ գեպքում ջուրն ամբողջ գիշերը մնում է հողի մեջ և ափելի խորը ծծվում: Լավ է ջրել առվի կամ անձրեխ ջրով:

ՊՈՄԻԴՈՐ

Պամիդորն այն ժամանակ են ցանում, յերբ որերն սկսում են տաքանալ: Շուտ համող պամիդոր ունենալու համար պետք ե սերմերը ջերմոցի մեջ ցանել և հետո

տեղավորել մարգերում: Յեթե հնարավոր չե ջերմոց պատրաստել, այն ժամանակ սրմերը պետք ե մարգերում ցանել: Սերմերը վորպիսպի չմրսեն, գիշերները պետք ե մարգերը խսիրներով ծածկել: Խոնավ հողի մեջ պամիդորի սերմերն սկսում են .



Մարգը ծածկված է խսիրով.

ծեկ 7-8 որից հետո: Ծլած բուլսի սկզբնական խնամքն այն ե, վոր պետք ե հողը փափկացնել, քարերը մաքրել և վոր գըլխավորն ե, քաղհան անել: Այդ աշխատանքները մեծ զգուշություն են պահանջում, հակառակ գեպքում դուք կարող եք վնասել նոր ծլած բույսերը: Յերբ պամիդորը կճյուղավորվի, պետք ե ավելորդ ճյուղերը

կտրել և մի քանի ծաղիկ թողնել: Պոմիդո-
րի ցողունները քամիներից պաշտպանելու
համար, պետք է ցողունների մոտ փայտե-
նեցուկներ խփել:


Գ Ա Զ Ա Բ

Քազարը ցրտին դիմանում է, դրա հա-
մար կարելի յե ցանել վաղ գարնանը: Գըլ-
խավոր խնամքն այն ե, վոր պետք ե վը-
նասակար խոտերը, մանավանդ սկզբնական
շրջանում, շուտ-շուտ պոկել հակառակ դեպ-
քում մատադ բուսը կարող է խեղդվել:
Այս արմատապտուղը կարելի յե ստանալ
դանազան հողերում:

Կ Ա Ղ Ա Մ Բ

Կաղամբի շիթիլ ստանալու համար սեր-
մերը պետք է պահել ջերմանոցում: Կա-
ղամբը խոնավություն և սիրում, իսկ յեթե
հողը շատ խոնավ ե, պետք է բարձր մար-
գերում ցանել: Շիթիլները պետք ե տնկել
երարից կես արշին հեռավորության վրա:
Տնկելու համար պետք է փոքրիկ թիակով

հողը քանդել և շիթիլը մինչև առաջին տե-
րևները



Զերմաց

ծածկել այնպես, վոր սեղմված լինի, ար-



Այսպես պետք է տնկել շիթիլը
մատների մոտ դատարկ տարածություն չը

մաս: Տնկելուց հետո հարկավոր ե վիթիւնները ջրել: Յեթև բուլսը բարձրանա 14—17 սանտիմետր, պետք ե առաջին բուկը տալ, իսկ յերեք շաբաթից հետո՝ յերկրորդ բուկը:

Բուկը տալ՝ նշանակում ե բուլսը ծածկել հողով և դուրս թողնել միայն մի քանի ձյուղ՝ իր տերևներով: Բուկը տալու շնորհիվ բուլսը հաստատուն, կայուն ե լինում և արմատներն ավելի լավ են տարածվում:


ՀԹԲԻ, ՍԻՍԵՌ

Նախքան ցանելը, պետք ե սիսեռը չոր շարունակ ջրում պահել. յերբ ցողունը մի քիչ կբարձրանա, պետք ե կողքին փայտ տնկել, վորպեսզի նրա վրա փաթաթվի: Զրելը, քաղցանը, բուկ տալը և ամբողջ ինամքը նույնն ե, ինչ վոր մոտա բուլսերինը:

ԿԱՐՏՈՓԻԼ

Կարտոփիլը թաղում են, յերբ հողն սկըսում ե քիչ փափկանալ: Տնկելու համար

լավ ե ջոկել առողջ, հասած կարտոֆիլներ: Յեթե կարտոֆիլը միծ ե, կարելի յե բաժանել 2-3 մասի: Այդ դեպքում պետք ե ամեն մի կտորի վրա լինի առնվազն յերկու աչք: Կարտոֆիլը անկելու համար բաց արած փոսերը Յ վերշոկ խորություն պետք ե ունենան, իսկ նրանց հեռավորությունն իրարից $\frac{3}{4}$ արշին պետք ե լինի:



Կարտոֆիլը բուկ տված

Հետագա խնամքը, բուկը տալը և ջրելն ե: Առաջին անգամ բուկ են տալիս, յերբ դուրս են գալիս տերևները և առաջին ձյուղերը: Յեթե ցողունը հասնում է 17 սանտիմետր բարձրության, պետք ե յերկրորդ բուկը տալ: Յերկու շաբաթ հետո յերերորդ և վերջին բուկն են տալիս:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Մենք գիտենք, վոր մարդն առողջ լինելու համար պահանջում է թարմ ող, արևու տաքություն։ Նույն պահանջն ունեն անասունները։ Այդ իսկ տեսակետից, յերբ նոր գոմ եք շինում, պիտիք և չսուսանալ այդ յերեք և զլխավոր պայմանները։ Գոմը կառուցելիս, պիտիք և առաստաղից անցկացնել ողը մաքրող խողովակ խուսափելով միջանցուկ քամիներից։ Արևի ճառագայթները թարսացնում են կենդանիների մարմինը և առողջություն պարզենում, ուստի անասուններին այդ ճառագայթներից չզըրկելու համար, պատերի մեջ լուսամուտներ պիտիք և թողել, ամեն մի անտառնի համար մոտավորապես մի քառակուսի մետր մեծությամբ։ Նպատակահարմար և լուսամուտները թողնել արենլան կողմից։

Առհասարակ ցրտից անասունները մեծ ներգիտա լեն կորցնում և վատառողջ լինում։ Վորպեսզի իր կորցրած եներգիան վերականգնի, անասունը պիտիք և ավելի անունդ վերցնի։ Բոլոր թերությունների գեմ կովելու համար պիտիք և նորմալ տա-

քություն՝ 15°C-ը, վորի համար պիտիք և ծածկել այն բոլոր անցքերը, վորտեղից ցուրտը կարող է զալ, իսկ ավելի բարձր տաքության աստիճան ցանկալի չե։ Այնունետի պիտիք և ամեն որ մի քանի անգամ մաքրել հատակը՝ հեռացնելով աղբը և խոնավությունը։ Որը մի քանի անգամ խոնդանակով պիտիք և մաքրել անասունների մաշկը և ալին, և այլն։

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԹԵԼ

Ճառ քիչ կովեր հն լինում. վորոնք կըթելու ժամանակ հանգիստ են կանգնում։ Հանգիստ չինելու պատճառները մի քանիսն են. որինակ՝ կամ տերն և անհանգըստացնում խփելով, գոռալով, կամ ստինքներն ուժեղ ձգելով (քաշելով), կամ կովը վորեն հիվանդություն և ունենում։ Վերջին գեպքում պիտիք և զիմել անասնաբուժն։ Վորպեսզի ընդհանրապես կովը հանգիստ կանգնի կթելու ժամանակ, հարկավոր և զոմք մտնելիս կովին մի անգամ շփել, մի փոքր խոտ տալ, ստինքները մաքրելուց (զոլ ջրով) հետո, սկսել հանգիստ կիթը։

Առասարակ սովորություն ե, պտուկը յերկու մատուցվ բռնել ու ձգել: Ազդ ձեի կթելը ցավ ե պատճառում, վորով յերբեմ տերը զրկվում ե կաթից: Դրա համար ամենաընդունված ձեն ե (վերջերում) ամբողջ պըտուկն առնել ձեռքի (բոի) մեջ և աստիճանաբար վերից վար մատներով սեղմել պտուկը: Դրանով կովը թե հանդիսաւ ե կանգնում և թե շատ կաթ և տալիս, վորովհետեւ կթում ենք մինչև վերջին կաթիւը, իսկ մենք գիտենք, վոր կաթի վերջին շիթերն իրենց մեջ ավելի շատ լուղ են պարունակում:

ԱՆԱՍՈՒԻՆՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Անասունների ցեղն ազնվացնելու առարեղում մեծ դեր ե խաղում կերակրելը: Անասունների նորմալ առողջ զարգացման համար վոչ չափազանց շատ կերակրելն ե պետք, վոչ ել չափազանց քիչ կերակրել—յերկու գեպքում ել անասունները թուլակազմ են լինում, հիվանդության շոււտ լինթակա: Բացի այս, նշանակություն ունի նաև կերակրման ժամանակը, վորովհետև

ժամանակին չկերակրելու դեպքում, անասունն սպասելով՝ հալվում-մաշվում ե: Գըլխավորը, վոր պետք ե շեշտել, կերի վորակն ե և չափը: Շատ տնտեսատերեր կերակրում են կամ խոտով, կամ հարդով, վորոնք փքիցնում են կենդանուն, սակայն քիչ սնունդ են տալիս և բացի ալդ, ձնշում են նրա որգանիզմը՝ ստամոքսում մեծ տեղ բռնելով, նամանավանդ հղի կովերին: Այս յերկութների դեմ կովելու համար հարկավոր ե լավացնել կերի վորակը, դրա հետ և ծագալը, տալով՝ խոտ, քուսպ, ալյուր, ճակընդեղ և այլն: Դրա համար պետք ե իմանալ անասունի կենդանի քաշը և ամեն մի Յ փութ կենդանի քաշին սի կերի միավոր տալ: որինակ՝ յեթե կովը 21 փթանոց ե, պետք ե 7 կերի միավոր տալ:

Կերի միավորը կազմվում է հետեւալ կերպ՝

400 գր. գարի ալյուր=1 կերի միավորի.

300 գր. քուսպը =1 » »

1000-1500 գր. լավ մարգա-

գետնի խոտը =1 կերի միավորի.

1200-1600 գր. ճակնդ.=1 » »

Նլսպիսով, յեթե մի տնտեսություն այս
բոլոր կերերն ունի, սրանցից կարող է
կազմել կերը։ Յեթե 3 անգամ կերակրի,
պետք է այդ կազմած կերը 3 մասի բաժանի։

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԵՐԲԱՐԻՈՒՄ ԿԱԶՄԵԼ

Ա. ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Հերբարիում կազմելու համար ամեն մի
պիոներ պետք է ունենա հետևյալ գործիք-
ները։

1. Կարճ կոթով թիակ կամ գանակ,
բուշակը հողից հանելու համար։



Նկ. 1.

2. Բուսարկդ. վորի մեջ լցնում են հո-
ղից նոր հանած բուշակը։

3. Փայտա յերկու օրջանակ 50 սմ. յեր-

կարությամբ և 30 սմ. լայնությամբ մետա-
ղե լարերից կազմված ցանցով—բուլսերը
չորացնելու համար։

4. Ծծող թուղթ կամ լրազրեր, ըլչա-
նակների մեծությամբ ծալած։

5. Տետր, վորտեղ գրվում են բոլոր
մանրամասնությունները հավաքած բուլսե-
րի մասին։

Բ. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՔԵԼ ԲՈՒՅՑԱԲԵՐԸ

Ամենից առաջ պետք է ընտրել առողջ
բուլսեր, իր բոլոր մասերով՝ արմատով, ցո-
ղունով, ծաղկով, տերեով և յեթե հնարա-
վոր ե, պառողով։ Բույսը հանելիս, պետք է
զգույշ լինել—աշխատել վոր արմատները
քիչ վնասավեն։ Հանած բույսի արմատը հո-
ղից մաքրելուց հետո, տեղափորում եք բու-
սարկդի մեջ։ Բուսարկդը պետք է մութ և
խոնավ լինի (խոնավ պահելու համար սո-
վորաբար մամուռ կամ կանաչ տերեներ են
լցնում)։

Ամեն մի հավաքած բուլսին պետք է
թուղթ կպցնել, համարը նշանակելով։


Տետրում նույն համարի գիմաց հարկա-
վոր և գրել վորտեղ և հավաքած բուլսը
(գյուղի, քաղաքի, ձորի կամ սարի անու-
նը), յերբ և հանած հողից (տարին, ամիսը,

թիվը, որվա ժամը), հաճախ և պատահում
և ինչ քանակությամբ:

Գ. ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Դրա համար հարկավոր և հավաքած
բուլսերը հանել բուսաբղից, արմատները
հողից բոլորովին մաքրել: Այնուհետև մաք-
րած բուլսը դնել ծանի կամ լրագրի թղթի
վրա և զգուշությամբ բաց անել տերեները:

Բուլսը չորացնելու համար ծածկում են
մի քանի թերթ ծծող թղթով և դնում շըր-



Նկ. 2.


ջանակների արանքում: Երջանակները գո-
տիով իրար պինդ կապում են և դնում մի
ծանր իրի տակ:

Այդ զնությամբ բույսերը պետք և պա-
հել յերկու որ:

Յերկու որից հետո քանդում են շըր-
ջանակները և բուլսերը տեղափոխում չոր

թղթերի արանքը, վորովհետև 2 որվա ըն-
թացքում բուլսը բավականին ջուր և գո-
լորշիացնում և թղթերը խոնավացնում են:

Դ. ՀԵՐԲԱՐԻՈՒՄ



Նկ. 3.

Հերբարիում
կազմելու հա-
մար, չորաց-
րած բույսերը
զգուշությամբ
նեղ ու բարակ
թղթերով, ա-
ռանձին-ա-
ռանձին ամ-
րացնում են
մաքուր թղթի
վրա: Թղթի
ներքեկի մա-
սում՝ աջ ան-
կյունում զը-
րում են՝ 1.
բուլսի համա-
րը, 2. վոր ըն-
տանիքին և

պատկանում, 3. անունը, 4. տեղը, 5. ժա-
մանակը, 6. և կ և հավաքիր, Բուլսի ինչ ըն-
տանիքին պատկանելու մասին պետք ե ի-
մանալ ուսուցչից, կամ ընագետից և ապա
նշանակել:

ՊԻՂՆԵՐ ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂԶՈՒԹՅՈՒՆԴ

I. ԲՆԱԿԱՐԱՆ

— Ավելորդ իրեր մի լցնիր սենյակդ վորտեղ դրւ քնում ես:

— Ողափոխութիւն լենթաթրկիր սենյակդ, առավոտյան և յերեկոյան (քնելուց առաջ 10 ր. պատուհանը բաց արա):

— Պատուհանի վրա իրեր մի դնի, այլ ազատ թող վոր արկը սենյակդ ընկնի:

— Հավաքիր, ճաքրիր, ավելիր և թաց շորով սրբիր սենյակդ և հատակը:

— Մի թքիր հատակին, զգուշացրու ուրիշներին:

— Կերակրի ամանները փակ պահիր, վոր ճանձերից և ուրիշ միջատներից ազատ լինեն:

II. ՀԱԳՈՒՍ

— Սպիտակեղենը, նախքան լվանալը, յեփիր տաք ջրում, վորպեսզի մանրեները վոչչանան:

— Հագուստներդ և անկողինդ հաճախ ողափոխութիւն լենթաթրկիր:

— Մի մոռանա խոզանակով մաքրել հագուստներդ ամեն որ:

— Գրպաններդ ավելորդ իրեր մի դնի:

III. ՄՆՈՒՆԴ

— Կանոնավոր կեր, աշխատիր լավ ծամել, կեր առանց շտապելու:

— Աշխատիր թունդ թեզ և սուրճ քիչ խմել, խալ կաթ՝ շատ գործածել:

— Վոգելից խմիչքներ (ողի, գինի, կոնյակ և այլն) մի խմեր, ուրիշներին ել արգելիր խմել:

— Քնելուց 2-3 ժամ առաջ պետք և ուտել:

— Լվա ձեռքերդ ուտելուց առաջ և հետո, սեղանն՝ ուտելուց հետո՝ հավաքիր:

**ՊԻՂՆԵՐ ԱՌՈՂԶՈՒԹՅՈՒՆԴ ԱՆՀՐԱ-
ԺԵԾՏ Ե ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶԱ-
ՏԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՐԻ ՀԱՄԱՐ**

IV. ՄԱՐՄԻՆ

— Մի թավալիր անկողնում:

— Լվա ձեռքերդ, պարանոցդ, ականջներդ: Մաքրիր ատամներդ ամեն որ:

— Ամառը հաճախ լողացիր գետում:

— Աշխատիր յերկար ժամանակ լինել
բաց ողում, մանավանդ արև ժամանակ:

— Մազերը յերկար չպետք ե պահել,
պետք ե խուղել (աղջիկները պետք ե կար-
ճացնեն):

— Մատները բերանը չպետք ե դնել,
յեղունգները չկրծել:

— Յերեկոյան անկողին մտնելուց առաջ,
վոտները պետք ե լվանալ:

Ա.ՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Վորքան հնարավոր ե շատ ոգտվիր
թարմ, մաքուր ողից և արեից:

2. Քնկոտ մի լինի և առավոտները մի
թավալվիր անկողնում: Քնելուց առաջ և
առավոտյան ողափոխության յենթարկիր
այն սենյակը, վորտեղ դու քնում ես և ա-
մեն որ ողափոխության յենթարկիր մատ-
րասդ և բարձդ:

3. Առավոտյան մարմինդ շփիր խոնավ
սրբիչով կամ սառը ջրով: Կանոնավոր լվա
պարանոցդ, ատամներդ, յերեսդ և յեղունգ-
ներդ մաքրիր:

4. Ամեն անգամ հետեւիր հագուստիդ,

շենքի մաքրությանը և ալլն: Մի կեղառ-
տիր հատակը և մի թքիր: Մոռըրությունն
առողջության նախապայմանն ե:

5. Դիրքն ուղիղ նստած կարդա, աշ-
քերդ շատ մի մոտեցնի գրքին: Պառկած
մի կարդա:

6. Յերեք մի ծխիր. քո թոքերը չեն
ստեղծվել թունավորվելու համար:

7. Շնչիր քթով, վոչ թե բերանով: Բե-
րանի միջով թոքերդ փոշի և մանրեներ են
գնում: Շնչիր, ինչքան կարելի յե խորը:

8. Զեռքերդ գրպանումդ մի պահիր, այդ-
պիսով կախվում են ուսերդ և ծովում մեջ-
ըլդ: Քայլելու ժամանակ աղատ շարժիր
ձեռքերդ:

9. Առանց բժշկի ցուցմունքի չընդունես
գեղեր:

10. Լավ ծամիր կերակուրը, ուտելուց
առաջ ձեռքերդ լվա, ուտելուց հետո ասամ-
ներդ մաքրիր և բերանդ թարս չըով վո-
ղողիր:

11. Տակի սպիտակեղենդ փոխիր շաբա-
թը մեկ անգամ:

12. Ամեն որ առավոտյան մարզանք կա-
տարիր:

ԱՐԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

ՋԱՐԴԻԿ ԱԾՔԻՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Վայր ընկնելուց, հարվածից կամ բոթելուց մարդ ջարդվածքներ կարող ե ստանալ: Այդպիսի գեղքերում հիվանդին հանգիստ դրուժյան մեջ պետք ե պահել և թարմ ողում: պետք ե արձակել նրա ոճիքը և հանել ավելորդ հագուստները: Յեթե հիվանդի գեմքը սաստիկ գունատ ե, հարկավոր ե սառ ջուր քսել գենքին, հիվանդին այնպես պառկեցնել, վոր վոտներն ու մարմնի ստորին մասը գլխից բարձր լինեն. դրա համար կարելի չե մահճակալի կամ թախտի վոտների տակ բան դնել:

ԱՅՐՎԱԾՔԻ ԴԵՊՔՈՒՄ

Այրվածքի գեղքումնախ և առաջ պետք ե հոգ տանել, վոր մանրեները վնասված մաշկից կազմվածքի մեջ չմտնեն: Այդ նըպատակով այրված տեղը մաքուր պետք ե կապել, ինչպես սովորական վերքը: Այրվածքին ոգնություն հասցնելիս՝ պետք ե զգուշությամբ հանել հագուստը, մկրատով

կտրելով միայն այնպես, վոր մաշկը չվնասվի, առաջացած բշտիկները չպատռվեն: Յեթե այրվածքն այնքան թեթև է, վոր միայն մաշկը կարմրել է, կարելի չե վրան մաքրած սողի փողի շաղ տալ: Յեթե բշտիկներ կան, պետք ե այրված տեղին վազելին կամ կրակաթի հետ խառնած կտավհատի ձեթքսել: Բշտիկները չպետք ե պատռել, վորովհետև դրանով կնպաստեք մանրեների ներս մտնելուն և կվարակեք այրվածքից առաջացած վերքը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ ՍԱՌԱԾԻՆ

Սառածի մարդինը պետք ե ուժեղ շփել ձյունով կամ սառ ջրով, վոչ սենյակում, այլ դուրսը կամ չարգախում: Կարելի յենրան գդալ-գդալ թունդ թեյ կամ սուրճ տալ, յեթե իհարկե, կարող ե նա կուլ տալ:

Սառած մարդուն պետք ե տեղափոխել շատ մեծ զգուշությամբ, վորովհետև նրա ձեռքն ու վոտը շատ հեշտությամբ կարող են կոտրվել: Միայն այն ժամանակ կարելի յե սառածին սենյակ տանել և այն ել վոչ շատ տաք սենյակ յիրը հիվանդն ուշքի չե

յեկել ե յերբ փալտացած անդամները բաց-
վում են և կինդանութիւնն նշանակը են
ցուց տալիս:

ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Արեահարության դեպքում պետք ե հի-
վանդին շուտով տեղափոխել լավ տեղ, հա-
գուստները հանել, սառ ջուր լցնել գլխին
և կրծքին. խմելու համար շատ ջուր տալ:
Ցեթե հիվանդը չի շնչում, պետք ե արհես-
տական շնչառություն կատարել:


ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ ԽԵՂԴՎՈՂԻՆ

Պետք ե խսկույն և յեթ հանել խեղդվողի
հագուստը, մատով լավ մաքրել բերանը,
փսխումից չպետք ե վախենալ, այնպիսի
դիրք պետք ե տալ նրան ինչպես ցուց ե
տրված նկարի մեջ և սեղմել մեջքն ափով,
վոր ստամոքսը և թոքերը ներս գնացած
ջուրը դուրս թափվի ըերանից:

Ջուրն ընկածի մարմինը պետք ե շփել
մահուդի կտորով, տաքացնել ջրով լիքը
շնչուվ և անհապաղ արհեստական շնչառու-

թյուն կատարել, միւնառւն ժամանակ պետք
ե բժիշկ հրավիրել:

Ցերը սկսի շնչել, առանց հսկողության
չպետք ե թողնել նրան, պետք ե պառկաց-





նել տաք անկողնում, գդալ գդալ տտք թել
կամ սուրճ ածել բերանը և նորից արհես-
տական շնչառություն կատարել, զիտակ-
ցությունը կորցնելու դեպքում:

ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Թունավորվել կարելի յե թունավոր ո-
ձերի կամ միջատների. կծելուց: Այս պեպ-
քում նախ և առաջ պետք ե հոգ տանել
վոր վերքից թունն արլան հետ ամբողջ
մարմնի մեջ չտարածվի: Ավելի նպատակա-
հարմար ե կծած տեղին բաժակ գցել. դրա
համար պետք ե վերցնել մի բաժակ, մեջը
գցել մի փոքր կտոր վառած բամբակ կամ
թուղթ, մի ակնթարթում շուռ տալ այդ
բաժակը և դնել կծած տեղի վրա ալնպես,
վոր բաժակի յեղբերը լավ կպչեն մաշկին:
Մաշկը կձգվի բաժակի ներսը և վերքից մի
փոքր արյուն կզա: Դրանից հետո վերքը
պետք ե այրել տաքացրած քորոցով կամ
մեխով: Յեթե ձեռքի կամ վոտքի վրա յե
կծածը, կարելի յե կծած տեղից վերև կա-
պել, վոր թունը չտարածվի, կապելուց հե-
տո բաժակը գցել կծած տեղին, այրել այդ
տեղը և հետո բաց անել կապը:


ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՊԵԼ ՎԵՐՔԵՐԸ

Վերքերը կապելու արհեստը հեշտ չի.



այդ սովորելու համար ժամանակ ե պետք:
Վերքը լավ կապելը յերկարատև փորձերից
հետո միայն կհաջողվի:

Սովորական կապերը շարժվում են և
չեն մնում վերքի վրա:



Այստեղ նկարների վրա ցույց է տված
թե ինչպես պետք է կապել մարմի զա-
նազան մասերը:

ԱՐՅՈՒԽՆԱՀՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Շատ հաճախ քթից արյունահոսություն
և տեղի ունենում: Այդ արյունահոսությու-
նը դադարեցնելու համար պետք է հիվան-
դին հանգիստ դրության մեջ նստեցնել
պառկած դրության մեջ արյունն ուժեղ է
հոսում դեպի հիվանդի գլուխը, ուստի դըժ-
վար կլինի արյունը դադարեցնել, յեթե հի-
վանդը պառկի. այդ դեպքում պետք է բաց
անել ոճիքը, վոր վերջինս չարգելի գլխից
արյան յետ գնալը յերակներով. ճակատի
վրա, քթի հիմքի վրա յերկու աչքերի մեջ-
տեղը պետք ե սառուց դնել կամ սառը
ջրով թրջած լաթ, վորովհետև սառնությու-
նից արյան անոթները սեղմվում են. քիթը
խոնավածուծ բամբակ ճիտել ե պետք վոր-
քան կարելի յե ամուր, բայց այնպես, վոր
բամբակի մի ծալը դրսից յերեա և հեշտ
լինի հանելը: Յեթե արյունը չի դադարում,
պետք ե սեղմել պարանոցի այն զարկերա-
կը, վոր արյունը տանում ե դեպի գլուխը
և հիվանդին անհապաղ պետք ե բժշկի մոտ
տանել:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱ-
ՌՈՒԹՅՅՈՒՆ ԿԱԾԱՐԵԼ


Յերբեմն շատ արյուն գալուց, արևահա-
րությունից կամ ջերմահարությունից, մարդ
կորցնում ե գիտակցությունը, դառնում ե
անզգա և դադարում ե շնչելուց: Շնչառու-
թյունը վերսկսելու համար բավական ե
քիթը խուսուտ ածել փետուրով կամ շնչե-
լու համար սուր հոտ ունեցող վորսե բան
որինակ՝ նաշապիրի սպիրտ դեմ անել. բայց
այդ միջոցը միշտ չի ոգնում. յիթե այդ
պարզ միջոցները չեն ոգնում, արհեստա-
կան շնչառության պետք ե դիմել:

Արհեստական շնչառություն կատարե-
լով, աշխատում են փոխեփոխ ներշնչում
և արտաշնչում առաջ բերել լայնացնելով
և սեղմելով կրծքի վանդակը:

Արհեստական շնչառության հասարակ
ձևերից մեկն այս ե.

Գետնին մի վերմակ կամ վերարկու փր-
ռել, հիվանդին յերեսնիվայր պառկեցնել,
ձեռքերը դեպի առաջ իսկ գլուխը թեքել
դեպի մի կողմ: Ոգնություն հասցնողն այն-
պես պետք է չոքի, վոր հիվանդի հետուքը

ոգնողի ազգբերի մեջտեղը մնա, հետո ոգ-
նողն իր ձեռքերը հիվանդի մեջքի վրա



Նկ. 1.


պիտի դնի այնպես, վոր յերկու ափը դրած
լինի հիվանդի վողնաշարի յերկու կողմը



Նկ. 2

ստորին կողերի վրա. կոանալով քիչ առաջ
առանց արմռունկները ծալելու, ոգնողն իր

ամբողջ ծանրությամբ ընկնում ե իր ափերի վրա, հետևապես և հիվանդի մեջքին. այս ձեռվ հիվանդի կրծքի վանդակը սեղմառում ե և թռքերի միջից ող ե գուրս գալիս: Դրանից հետո հարկավոր ե դադարեցնել սեղմելը և յետ քաշել մի փոքր, առանց հիվանդի մեջքից ձեռքերը վերցնելու: Հիվանդի կողերը և կրծքի վանդակը իրենք իրենց կուղղվեն, կրացվեն և կլայնանան. Նրանց հետ միասին կլայնանան թռքերը և ողը ներս կմտնի: Այնուհետեւ նորից պետք ե սեղմել ու կրկին դադարեցնել և այդ շարժումները յուրաքանչյուր ըոպելում 15—20 անգամ կատարել:



ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՓՈԽԱԴՐԵԼ ՀԻՎԱՆԴԻՆ



ԱՐԵՎԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ամառը թեթև ու բաց գույնի հարուստ պետք է հագնել:

2. Յեթև ուզում ես ուժեղ այրվել, արեկ վաննա ընդունիր, գետի, լճի, ծովի ափին պառկելով, յերբ որերը տաք լինեն:

3. Յերբ արեկի վաննա յես ընդունում, գլուխդ արեկից պահիր և մարմնիդ դրությունը հաճախ փոփոխիր:

4. Լիքը ստամբքով արեկի վաննա մի ընդունիր: Հավ ժամանակը—առավոտյան ե:

5. Առաջին 2 որը պառկիր արեկի տակ վոչ ավել քան 5 ըոպե: այնուհետև յուրաքանչյուր որ ավելացրու մի քանի ըոպե՝ 30—40 ըոպեի հասցնելով:

6. Արեկի վաննայից հետո, սառը ջրով հովացիր կամ թե լողացիր գետում, հետո սպասիր մինչև չորանալը, ապա հագնվիր և մի քիչ հանգստացիր ստվերում:

7. Յեթև արեկի վաննայից հետո անհանգիստ քնիս, արեկի վաննան ժամանակավորապես դադարեցրու և ողային վաննաներ ընդունիր ստվերու տեղում (դարձյալ մինչև վոտքերդ մերկացած):

ԽԶՉԵՍ ԹԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ՅԵՂԱՆԱԿԸ

1. ՊԱՐՁ ՅԵՂԱՆԱԿԸ

ա. Թոչունները բարձր են թոչում:
բ. Ծովային թոչունները թոչում են ծովի կողմը:

գ. Յերկինքն առավոտյան դարչնագույն և լինում:

դ. Արշալույսին յերկինքը կարմիր և լինում:

2. ԱՆՁԲԵՎԻ ՄՈՑԵՆԱԼԸ

I. Թոչունները ցածր են թոչում:

II. Զայնը շատ պարզ ելավում:

III. Առավոտյան յերկինքն ամպամած և լինում:

IV. Զկները խորասուզվում են ջրի մեջ:

V. Արել ծագելու ժամանակ յերկինքը կարմիր և լինում:

VI. Ծովիը ցածր և կանգնում:

3. ՎԱՏ ՅԵՂԱՆԱԿԻ ՄՈՑԵՆԱԼԸ

I. Թոչունները ցածր են թոչում:

II. Ծովային թոչունները դեպի ափ են թոչում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐՅՈՒՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍՏԱԽԱԿ

	1	2	3	4	5	6
$3h_1l^{q_m}l^{2m}l^p\theta l$						
$3h_1l^h_1l^{p_2m}l^p\theta l$						
$2_{-1}h_1l^{p_2m}l^p\theta l$						
$2h_1l^{q_m}l^{2m}l^p\theta l$						
$1_{-1}l^{q_m}l^{2m}l^p\theta l$						
$2_{-1}l^{q_m}l^{2m}l^p\theta l$						

ନାରୀଙ୍କରିତାକାଳେ ବୁଦ୍ଧିମତ୍ତା ପାଇଲାଏ ଅନ୍ତର୍ଗତରେ

	1	2	3	4	5	6
$\beta h_1 l^m \eta_2 m \rho \theta \rho$						
$\beta h_1 h_1 \rho \eta_2 m \rho \theta \rho$						
$\eta_1 l^m h_1 \rho \eta_2 m \rho \theta \rho$						
$\zeta_1 h_1 \eta_2 m \rho \theta \rho$						
$\rho_1 \rho \rho^m \rho$						
$\tilde{\sigma}^m \rho^m \rho$						

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

№№	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3	.	
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

№№	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

№	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

№	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հեմ	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՈՂԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հեմ	Ազգանուն անուն	Հասցե
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

Կարեվոր հանձնարարությունների քերթիկ

Յերբ
հանձնար.

Ինչ է հանձնարարված

Յելբ և կա-
տարված

Կարեվոր հանձնարարությունների քերթիկ

Յերբ
հանձնար.

Ինչ է հանձնարարված

Յերբ և կա-
տարված

Կարեգոր հանձնարարությունների քերթիկ

Յեղիկ
համաձայն

Ինչ է հանձնարարված

Յեղիք և կա-
տարված

27

Կարեգոր հանձնարարությունների քերթիկ

Յեղիկ
համաձայն

Ինչ է հանձնարարված

Յեղիք և կա-
տարված

ԿՈԼԵԿՑԻՎՆԵՐԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

ԱՆՁԻՆ ԹԻՎ	ԻՆՉ ԵՔ արել	ԱՆՁՆԱԼԿԱՆ ՄՊԱԳՈՐԾՈՒ- ԹՅՈՒՆ

ԿՈԼԵԿՑԻՎՆԵՐԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

ԱՆՁԻՆ ԹԻՎ	ԻՆՉ ԵՔ արել	ԱՆՁՆԱԼԿԱՆ ՄՊԱԳՈՐԾՈՒ- ԹՅՈՒՆ

ԿՈՂԵԿՏԻՎԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Ամիս թիվ	Ինչ եք արել	Անձնական տպավորու- թյուն

ԿՈՂԵԿՏԻՎԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Ամիս թիվ	Ինչ եք արել	Անձնական տպավորու- թյուն

ԿՈԼԵԿՑԻՎԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Ազգական թվել	Ինչ եք արել	Անձնական տպագործություն

ԿՈԼԵԿՑԻՎԻ ՅԵՎ ՈՂԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Ազգական թվել	Ինչ եք արել	Անձնական տպագործություն

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ

ՀԱՂԻՄԱԿ	ԳՐՔԻ անունը	Քանի թերթ համարականի	Գրքից ստացած տպավորություններդ

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ

ՀԱՂԻՄԱԿ	ԳՐՔԻ անունը	Քանի թերթ համարականի	Գրքից ստացած տպավորություններդ

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՅԵԼ

Հայոց	Գրքի անունը	Բանական թիվ	Առաջնային լեզու	Գրքից ստացած տպագորությունները

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՅԵԼ

Հայոց	Գրքի անունը	Բանական թիվ	Առաջնային լեզու	Գրքից ստացած տպագորությունները

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ

Հեղինակ	Գրքի անունը	Քանի թիվ համացացի	Գրքից ստացոծ տպավորություններդ

ԻՆՉ ԳՐՔԵՐ ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ

Հեղինակ	Գրքի անունը	Քանի թիվ համացացի	Գրքից ստացած տպավորություններդ

Զբոսանիների լեզ եխկուրսիաների
հաշվառում

Այլուր թիվ	Ուր եք գնացել	Եքսկուրսիայից կամ զբո- սանինից ստացած տպա- վորությունները

Զբոսանիների լեզ եխկուրսիաների
հաշվառում

Այլուր թիվ	Ուր եք գնացել	Եքսկուրսիայից կամ զբո- սանինից ստացած տպա- վորությունները

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եզ Տեղ Տպված է Պետք է լինի

10 6 Սիրիրից կենիւնին հաջողվում կառնալով կենիւնի փախչել արտասահման արտասահման

10 2.ն 1919 թ. մինչ 1918 թ. մինչեւ ներշիկ 1923 թ. 20—21 թ. քերց

18 5 1918 թ. մինչեւ 1918 թ. միչեւ 22 թ. 20—21 թ.

23 5 2 ամիս 2 որ 72 որ

30 12 պատերազմը իմպերիալիստականիք տական պատերազմանակում երազմը շարունակում եւ

41 16 1923 թ. VI համ. 1924 թ. VI համ.

81 10 խամ Խաղաղություն իսկում եւ





ՀՀ Ազգային գրադարան



NL0191495

